ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

N-ԼԹ-03/517/25
«19» սեպտեմբեր 2025թ.

«Մեդիայի սեփականության մոնիտորինգ Հայաստանում» ծրագրի թիմ՝
«Հետք» և «Global Media Registry»
«Հետք» առցանց թերթի լրագրող Արեն Նազարյանին

Հարգելի պարոն Նազարյան,

Ի պատասխան Ձեր 2025 թվականի օգոստոսի 19-ին Հանրային հեռուստաընկերությանն ուղղված գրությանը՝ ստորև ներկայացնում ենք «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի պատասխանը՝ Ձեր կողմից բարձրացված հարցերին առնչվող տեղեկատվության վերաբերյալ:

Հարց 1՝ 2025 թվականի օգոստոսի 19-ի դրությամբ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերությունում գործում են հետևյալ թվային տվյալները.

- հաստիքային պաշտոններ են զբաղեցնում 585 աշխատակից,
- 229 անձ ներգրավված է քաղաքացիաիրավական պայմանագրերով՝ որպես ծառայություն մատուցող:

a. Լուսինե Նորիկի Բարսեղյանը զբաղեցնում է Հանրային հեռուստաընկերության Լրատվական և վերլուծական հաղորդումների տնօրենի պաշտոնը:

Հարց 2՝ «Առաջինի լրատվական ալիք»-ը հանդիսանում է Հանրային հեռուստաընկերության տեսալսողական ծրագիր, չունի ինքնուրույն իրավաբանական անձի կարգավիճակ, հետևաբար, այն չի կարող ունենալ առանձին գործադիր տնօրեն կամ գլխավոր խմբագիր:

a. Սույն հարցադրման պատասխանը բխում է վերը նշված հարցի պատասխանից:

b. ՀՀ օրենսդրությունը չի նախատեսում կայքի՝ «Մեր մասին» բաժնի պարտադիր պահանջ, ուստի Հանրային հեռուստաընկերությունը իր հայեցողության շրջանակներում նպատակահարմար չի գտել ստեղծել առանձին «Մեր մասին» բաժին՝ «Առաջինի լրատվական ալիք»-ի կայքի համար: Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ Հանրային հեռուստաընկերության պաշտոնական կայքում առկա է «Մեր մասին» բաժինը:

c. Ինչպես արդեն նշվեց, «Առաջինի լրատվական ալիք»-ը չի հանդիսանում առանձին իրավաբանական անձ, հետևապես այն չունի առանձին աշխատակիցներ: «Առաջինի լրատվական ալիք» տեսալսողական ծրագրով, «Առաջին ալիք» տեսալսողական ծրագրով, ինչպես նաև Հանրային հեռուստաընկերության այլ ծրագրերով զբաղվող անձինք հանդիսանում են նույն

Երևան, Նորք 0011
Գ. Հովսեփյան 26
հեռ.՝ +374 10 65 00 15
էլ. հասցե՝ ceooffice@1tv.am

կազմակերպության՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության աշխատակիցներ:

Հարց 3՝ Ձեր կողմից նշված ծրագրերը չեն հանդիսանում քաղաքացիաիրավական հարաբերությունների ինքնուրույն սուբյեկտներ, ուստի չունեն առանձին սահմանված բյուջե: Վերջիններս հանդիսանում են Հանրային հեռուստաընկերության ներքին ծրագրեր, ըստ այդմ, դրանց միջոցով տարածվող հաղորդումների արտադրության համար օգտագործվում են ընկերության ընդհանուր ռեսուրսները, և դրանց առանձին հաշվառում չի կատարվում:

Հարց 4՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ***տեղեկատվություն տնօրինողը,*** բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում սահմանված դեպքերի, ***մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա՝ պարունակում է*** պետական, բանկային, ***առևտրային գաղտնիք*** կամ սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություն.

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը 141-րդ հոդվածում նախատեսում է ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության կարգավորումը, որից կարելի է թվել այն հատկանիշները, որոնցով տեղեկատվությունը պետք է օժտված լինի, որպեսզի նշված օրենքի տեսանկյունից տեղեկատվության դասումը առևտրային գաղտնիքին իրավաչափ համարվի: Այսպես, այդ հատկանիշներն են.

1. երրորդ անձանց անհայտ լինելը,

2. վերջինիս ուժով իրական կամ հնարավոր առևտրային արժեք ունենալը,

3. օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորության բացակայությունը,

4. տեղեկատվություն ունեցողի՝ դրա գաղտնիության պահպանման համար միջոցներ ձեռնարկելը:

Այսպես, իրավական տեսանկյունից ընկերության կոնկրետ ծրագրին որոշակի ֆինանսական միջոցների փոխանցման վերաբերյալ տեղեկությունը դասվում է առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվության շարքին, քանի որ այն համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածում ամրագրված հատկանիշներին: Նախ և առաջ, նման տեղեկությունը երրորդ անձանց անհայտ է. այն հասանելի է բացառապես Հանրային հեռուստաընկերությանը և, բացի օրենսդրությամբ սահմանված հատուկ դեպքերից, այլ անձինք իրավաչափ կերպով չեն կարող այն ստանալ: Բացի այդ, տվյալ տեղեկատվությունն օժտված է իրական կամ հնարավոր առևտրային արժեքով, քանի որ փոխանցումների ծավալները, ժամանակացույցը կամ նպատակները կարող են թույլ տալ մրցակիցներին գնահատել ընկերության ֆինանսական կայունությունը, հաճախորդային կամ գործընկերային ցանցի առանձնահատկությունները: Նման տվյալների հրապարակումը կարող է էականորեն ազդել ընկերության մրցակցային դիրքի վրա և ստեղծել տնտեսական ռիսկեր: Հարկ է նաև նշել, որ ֆինանսական փոխանցումների վերաբերյալ տեղեկությունը օրինական հիմքերով ազատ մատչելի չէ. այն չի ներառվում

հանրային աղբյուրներում և պարտադիր հրապարակման ենթակա չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ նման պարտավորությունը բխում է օրենքից (օրինակ՝ հարկային մարմիններին հաշվետվությունների ներկայացում, դատական գործընթացների շրջանակում բացահայտում): Այս հանգամանքների համակցությամբ, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն, հիմք ընդունելով գործող օրենսդրությունը, չի կարող տրամադրել հայցվող տեղեկատվությունը:

Այնուամենայնիվ, տեղեկացնում ենք, որ կարող եք ծանոթանալ 2024 թվականի գործունեության մասին Հանրային հեռուստաընկերության տարեկան հաշվետվությանը, համախմբված ֆինանսական հաշվետվություններին և անկախ աուդիտորի եզրակացությանը՝ այցելելով մեր պաշտոնական կայքի «Փաստաթղթեր» բաժինը՝ (հղումը՝ https://www.1tv.am/hy/reports): Նմանապես, կարող եք ծանոթանալ Հանրային հեռարձակողի խորհրդի՝ հանրային հեռարձակողների 2024 թվականի գործունեության հաշվետվությանը՝ (հղումը՝ https://www.tvradiocouncil.am/hy/informations/tarekan-haghordum):

a. «Առաջին ալիքի Մեդիա Ակադեմիա» հիմնադրամը 2024 թվականին այլ աղբյուրներից միջոցներ չի ներգրավել:

b. Հիմնադրամում առկա է միայն գործադիր տնօրենի հաստիքը: Այլ հաստիքներ սահմանված չեն:

Հարց 5՝ Ձեր կողմից հայցվող սույն տեղեկատվությունը վերոգրյալ հիմնավորմամբ նույնպես հանդիսանում է առևտրային գաղտնիք, ուստի այն չենք կարող տրամադրել:

a/b/b.i. Պատասխանը նույնաբովանդակ է վերը ներկայացված հիմնավորմանը:

c.«Առաջին ալիք Ամերիկա» ծրագիրը հեռարձակվում է շուրջօրյա՝ 24/7 սկզբունքով:

d/d.i Հանրային հեռուստաընկերությունը գործում է հեռուստաընտանիքի սկզբունքով, տարբեր ստեղծագործական խմբեր պատրաստում են բովանդակություն, որոնք հեռուստաընտանիքի անդամ՝ հեռարձակվող չորս և թվային մեկ ալիքները կարող են օգտագործել իրենց եթերացանցում:

e.Հանրային հեռուստաընկերության եթերացանցին կարող եք ծանոթանալ այցելելով մեր պաշտոնական կայքի «Հաղորդումներ» բաժինը:

f. «Առաջին ալիք Ամերիկա» ընկերությունում աշխատում է մեկ աշխատակից՝ տնօրենը:

Հարց 6՝ «Առաջինի միջազգային ալիքը» հեռարձակվում է արբանյակային եղանակով՝ 13.0°E Hotbird-13G արբանյակի միջոցով, ինչպես նաև կաբելային եղանակով՝ թվով 11 ընկերությունների հետ ձեռք բերված համաձայնությունների հիման վրա, որոնք ապահովում են ծրագրի հեռարձակումը տարբեր երկրներում:

a. «Առաջինի միջազգային ալիքի» հեռարձակման ընդհանուր տիրույթը ներառում է ամբողջ Եվրոպան, Ասիայի հյուսիս-արևելքի մեծ մասը (Միջին Ասիա,

Իրան, Ռուսաստանի հիմնական մաս՝ բացառությամբ հեռավոր արևելյան հատվածի), Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրները:

b. Ծրագրի ֆինանսավորման առանձնացված բյուջե առկա չէ: Օգտագործվել են Հանրային հեռուստաընկերության ընդհանուր ռեսուրսները:

Հարգանքով՝

Հանրային կապերի և թվային
հաղորդակցության ծառայության ղեկավար **Լուսինե Թորոսյան**